

Ժաննա ՄԻԴՈՅԱՆ
Անուշ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

**ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն հոդվածում քննության են առնվում համացանցային հաղորդակցման լեզվական առանձնահատկությունները: Լեզուն համացանցում ենթարկվում է փոփոխությունների տարբեր առումներով՝ բառապաշարային, տեքստի կառուցման, հաղորդակցության ռազմավարության և այլնի: Նկատվում են տարբեր միտումներ՝ ուղղագրական ընդունված կանոններից շեղվելը, կարճ բառային ձևերի օգտագործումը, բառապաշարում խոսակցական ոճի գերակայությունը, քերականական կառույցների և լեզվական միջոցների պարզեցումը:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ համացանցից օգտվողներն աստիճանաբար փոխակերպում են լեզուն՝ բացահայտելով լեզվական նոր ձևեր, որոնք վիրտուալ հաղորդակցությունից փոխանցվում են իրական կյանք:

Քանալի քառեր. *համացանցային լեզվաբանություն, համակարգչով միջնորդավորված հաղորդակցություն, վիրտուալ խոսույթ, վիրտուալ միջավայր, գրավոր և բանավոր հաղորդակցություն, համացանցի ժանր, գերտեքստ, գծային տեքստ, համաժամանակյա/տարժամանակյա*

Համացանցում հաղորդակցությունն իրականացվում է լեզվական միջոցներով, որոնք ձեռք են բերում մի շարք լրացուցիչ գործառնություններ: Լեզվական միջոցների օգնությամբ իրենց արտահայտությունն են գտնում ոչ միայն հաղորդակցության մասնակիցների մտքերը, այլև գործողությունները: Այսպես, օգտատերն իր ներկայությունը համացանցում կարող է ցույց տալ միայն ուրիշների հետ խոսքային հաղորդակցության գործընթացում: Համատեղ գործողությունների համակարգումը հիմնված է բացառապես խոսքային հաղորդակցության վրա: Հուզական վիճակները նույնպես խոսքի միջոցով են արտահայտվում /Горошко, 2009: 11-127/:

Այսպիսով, կարելի է պնդել, որ խոսքային հաղորդակցությունը համացանցի՝ որպես սոցիալական իրականության համակարգաստեղծ հատկանիշն է: Այդ առնչությամբ համացանցի լեզուն ենթարկվում է փոփոխությունների տարբեր առումներով՝ բառապաշարը, տեքստի կառուցման կանոնները, ժանրային-ոճական նորմերը, խոսքի գրավոր և բանավոր ձևերի հարաբերակցությունը, հաղորդակցության ռազմավարությունը:

Նկատվում են տարբեր միտումներ՝ ուղղագրության ընդունված կանոններից հրաժարվելը (հատկապես մեծատառեր և կետադրական նշաններ չկիրառելը), քերականական կառուցվածքների պարզեցումը, կարճ բառային ձևերի օգտագործումը, բառապաշարում խոսակցական, ժարգոնային լեզվական ձևերի գերակայությունը և այլն: Վիրտուալ հաղորդակցության գործընթացում

լեզուն կարող է այլ լեզուներից փոխ առնել նոր բառեր, կամ արդեն գոյություն ունեցող բառերը կարող են ստանալ այլ նշանակություն: Այսպիսով, համացանցը լեզվական հետազոտությունների հետաքրքիր աղբյուր է:

Համացանցային հաղորդակցության լեզուն կարելի է բնորոշել որպես գիր ունեցող ցանկացած լեզվի գործառական տարատեսակ, ենթալեզու: Նման բնորոշման համար հիմք են հանդիսանում համակարգչային լեզվի գործառության հետևյալ առանձնահատկությունները՝ հատուկ բառապաշարի և քերականական առանձնահատկությունների առկայությունը, հաղորդակցության մյուս ոլորտներից համակարգչային լեզվի գործառության ոլորտի խիստ սահմանափակվածությունը, համակարգչային լեզվի օգնությամբ ժանրերի նոր համակարգի և նոր ժանրային ձևերի կազմավորումը /Белинская, 2011: 5-10/:

Անգլալեզու գիտական գրականության մեջ այդ նոր էլեկտրոնային լեզվի սահմանման համար օգտագործվում են տարբեր եզրեր՝ e-language, netlingo, e-talk, geekspeak, netspeak, weblish և այլն /Crystal, 2001: 107/: Համացանցի լեզվի ուսումնասիրության օբյեկտը, փաստորեն, էլեկտրոնային հաղորդակցությունն է, իսկ առարկան՝ էլեկտրոնային հաղորդակցության հատկանիշները տարբեր լեզվական մակարդակներում՝ ձևաբանական, բառային, շարահյուսական, տեքստային, հաղորդակցական և այլն: Համացանցով հաղորդակցությունը տարբեր ուսումնասիրություններում մեկնաբանվում է որպես հատուկ հաղորդակցատեղեկատվական միջավայր կամ էլեկտրոնային հաղորդակցման կապուղով միջնորդավորված հաղորդակցական տիրույթ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման և կիրառման ոլորտում ԱՄՆ-ի առաջատար դերը պատճառ է հանդիսացել էլեկտրոնային հաղորդակցության մեջ անգլերենի գերակա դիրքի ամրապնդման համար: Տարբեր մշակույթների ներկայացուցիչների համար համացանցի տարածման գործընթացում անգլերենը հանդես է գալիս որպես հաղորդակցական չափանիշ /Смирнов, 2005/:

Փաստորեն, համացանցը շարունակում է նպաստել անգլերենի զարգացմանը: Դրա շնորհիվ անգլերենում ի հայտ են եկել այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, «podcast» (ռադիո և այլ ծրագրերի թվային ձայնագրություն, որը կարելի է ներբեռնել համացանցից offline ռեժիմով լսելու համար) կամ «phishing» (համացանցում կեղծարարության մի տեսակ) /www.rol.ru/news/:

Այսօր «համացանցի լեզու» հասկացությունը բավականին հաճախ է կիրառվում, սակայն հաշվի առնելով դրա նոր և բարդ լինելու հանգամանքները՝ գոյություն չունի այդ երևույթի համընդգրկուն սահմանում: Համացանցի լեզուն առավելապես բանավոր, համացանցում հաղորդակցվողների միջև տեղեկատվության փոխանցման և փոխանակման, հաղորդակցության բարդ համակարգային նշանների միջոց է: Համացանցում հաղորդակցությունն իրացվում է հատուկ լեզվով, որն իրականացնում է տարբեր գործառույթներ: Պետք է նշել, որ լեզվաբանության մեջ «գործառույթ» բառը կիրառվում է «իրականացվող աշխատանք», «նշանակություն», «ղեր» իմաստներով:

Համացանցով հաղորդակցվողները կիրառում են լեզուն՝ կարծիքների, մտքերի, ցանկությունների, քննարկվող հարցերի և թեմաների վերաբերյալ իրենց

դժգոհության արտահայտման համար, սակայն հաղորդակցության նպատակները կարող են տարբեր լինել՝ կախված համացանցում իրականացվող փոխգործակցության մասնակիցների սկզբնական նպատակներից և մղումներից:

Սովորաբար լեզվի հաղորդակցության գործառույթն ավելի պարզ արտահայտվում է էլեկտրոնային փոստում, «Chat»-ում, «Conference»-ում, «Forum»-ում /Иванов, 2000/: Լեզվի հաղորդակցական գործառույթը բաժանվում է մի շարք առավել որոշակի գործառույթների: Օրինակ, **տեղեկատվական** գործառույթն օգնում է մարդկանց փոխանակել տվյալներ իրականության և դրանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Այդ գործառույթը հանդես է գալիս համացանցում հաղորդակցության բոլոր մակարդակներում՝ «Chat»-ում, «Forum»-ում և այլն: **Արձանագրող կամ հաստատող** գործառույթն ապահովում է փաստի վերաբերյալ հաղորդագրության պարզ փոխանցումն՝ առանց մեկնաբանության /Чепель, 2009/: Համացանցում տվյալ գործառույթին կարելի է հանդիպել հատկապես նորությունների կայքերում: **Հարցական** գործառույթը հանդես է գալիս փաստերի վերաբերյալ տարբեր հարցումներում և բնութագրվում է հարցական նախադասությունների և բառերի առկայությամբ: Այդ գործառույթը համացանցում իր արտահայտությունն է գտնում փնտրող համակարգերում և «Forum»-ներում: **Կսպ հաստատող** գործառույթի էությունը կայանում է գրուցակիցների միջև կապերի ստեղծման և պահպանման մեջ, երբ ինչ-որ չափով էական տեղեկատվության փոխանցում դեռևս կամ արդեն չկա: Նշված գործառույթը հանդես է գալիս մասնավորապես հրաժեշտի և ողջույնի ընդունված ձևերում: Բացի այդ, համացանցում լեզուն անձանց միջև սկզբնական կապերի հաստատման միջոց է, այդ թվում նաև այն անձանց, որոնք միմյանիցից հեռու են և անձանոթ /Иванов, 2000/:

Այսպիսով, լեզվի հաղորդակցական գործառույթը և նրա մասնավոր դրսևորումներն ամբողջությամբ ներկայացված են համացանցով հաղորդակցության մեջ: Բացի այդ, համացանցի լեզուն իրականացնում է մի շարք այլ գործառույթներ: **Ճանաչողական** գործառույթն օգնում է ստանալ նոր տեղեկատվություն: Համացանցով հաղորդակցության ընթացքում մշտապես նոր կարևոր տվյալներ են ստացվում: Տվյալ գործառույթն իրականացվում է նորությունների, կրթական, հանրագիտարանային, տեղեկատվական կայքերում: **Հուզական** գործառույթը զգացմունքների և հույզերի արտահայտման միջոցներից մեկն է: Քանի որ համացանցում հաղորդակցությունը տեղի է ունենում առավելապես գրավոր եղանակով, հաղորդակցության մասնակիցների համար այնքան էլ դյուրին չէ արտահայտել իրենց վերաբերմունքը, զգացմունքներն ինչ-որ բանի նկատմամբ, զնահատել իրավիճակը և այլն: Տվյալ խնդրի լուծման համար համացանցի լեզվում ներառվել են հատուկ նշաններ՝ հուզապատկերներ կամ գրաֆիկական նշաններ /Бергелсон, 2001: 59/: Դրանք սովորաբար օգտագործվում են ոչ խոսքային տեղեկատվության օգտագործման համար: Գոյություն ունեն բազմաթիվ հուզապատկերներ, որոնք արտահայտում են մարդկանց ապրումների տարբեր նրբերանգներ, ինչպես, օրինակ, բարձր ծիծաղ, ժպիտ, տխրություն, չարություն, գայրույթ և այլն: Բացի

այդ, հուզական իրավիճակի փոխանցման համար հաղորդակցության մասնակիցները կիրառում են տարբեր կետադրական նշաններ կամ միևնույն տառի կրկնության մեթոդը: Օրինակ, բացականչությունը կամ մտամոլորությունն ու ծուլությունը փոխանցվում են տառերի (ավելի հաճախ ձայնավորների) կրկնությամբ կամ հարցական ու բացականչական նշանների օգնությամբ:

Համացանցով հաղորդակցության միջավայրում տեքստային բաղադրիչի նշանակությունն առաջնային է, քանի որ հաղորդակցական գործընթացն, ինչպես արդեն նշել ենք, մեծ մասամբ իրականացվում է միայն տեքստերի փոխանակության միջոցով: Բնականաբար, տեքստային լեզվաբանությունը պետք է առաջնային դեր խաղա համացանցի հաղորդակցական տիրույթի ուսումնասիրության հարցում: Դեռևս նախորդ դարի 70-ականների վերջին Մ. Հելիդեյը գրել է. «Տեքստը լեզուն է գործողության մեջ»/Хэллiday, 1978:142/: Ռուս հետազոտող Ե. Գորոշկոն տրամաբանական շարունակություն է տվել Հելիդեյի նշված մտքին՝ գրելով. «Համացանցը տեքստի գործողության հատուկ միջոց է...»/Торошко, 2009: 5/:

Համացանցով հաղորդակցության բնորոշ գծերից է նաև համակարգչային ժարգոնի առկայությունը, որը հիմք չի հանդիսանում համացանցով հաղորդակցվողների լեզուն գրավոր համարելու համար, քանի որ գրավոր խոսքում կիրառվում է բավականին նորմավորված գրքային լեզու, որը տարբերվում է բանավոր խոսքից պատրաստվածությամբ և առավել գրական ձևակերպվածությամբ: Համակարգչային ժարգոնը համացանցով հաղորդակցության մասնակիցների համար հատուկ ենթալեզվի գործառույթ է իրականացնում: Օրինակ, անգլալեզու համակարգչային ժարգոնը բաղկացած է հիմնականում տերմինաբանական արտահայտությունների հեզմական նմանաբանություններից:

Լեզվի վրա համացանցի ազդեցությունը բարդ խնդիր է: Համացանցում տեղի է ունենում նաև լեզվական միջոցների պարզեցում, որը որոշ դեպքերում հանգեցնում է լեզվի գռեհկացմանը: Սակայն գոյություն ունի նաև հակառակ երևույթը: Օրինակ, տեքստի վերափոխումը գերտեքստի բարդացում է տեքստի կառուցվածքը: Տեքստերի համեմունը համակարգչային բառապաշարով և հատուկ եզրերով նույնպես չի կարող պարզեցում համարվել:

Համացանցից օգտվողները պարզեցնում են բառերի արտասանությունն ու գրելաձևերը՝ դրանք արագ հավաքելու կամ արտասանելու նպատակով, իսկ երբեմն նույնիսկ կազմում են հապավումների բառարաններ: Նշենք, որ տարատեսակ կրճատումների ու հապավումների օգտագործումն ամեն դեպքում գրավոր խոսքին բնորոշ գիծ է: Պետք է նկատել, որ այդ հապավումները բավականին հաճախ կիրառվում են նաև իրական կյանքում: Ստորև բերված են համացանցի լեզվում առավել շատ կիրառվող հապավումներից մի քանիսը՝

AFAIK As Far As I Know (Ինչքան, որ ինձ հայտնի է)

AFK Away From Keyboard (Հեռացել եմ համակարգչի մոտից)

ASAP As Soon As Possible (Հնարավորինս շուտ)

BBL Be Back Later (Կվերադառնամ ավելի ուշ)

BRB Be Right Back (Շուտով կվերադառնամ)

BTW By The Way (Ի դեպ)
 GNSTDLTBBB Good Night, Sleep Tight, Don't Let The Bed Bugs Bite
 (Բարի գիշերվա մաղթանք)
 IMHO In My Humble Opinion (Իմ համեստ կարծիքով)
 IP Internet Provider (Համացանցի մատակարար)
 LOL Laughing Out Loud (Բարձր ծիծաղում եմ)
 PMJi Pardon My Jumping in (Կներեք, որ միջամտում եմ)
 ROTF Rolling on the floor (Թավալվում եմ գետնի վրա)
 ROTFL Rolling on the floor laughing (Ծիծաղից թավալվում եմ գետնի վրա)
 b4 Before (Նախկինում)
 CUI8tr See you later (Կտեսնվենք ավելի ուշ)
 rehi Hello again (Կրկին ողջույն)

Կախված հասցեատիրոջ վրա ազդեցության հետապնդվող նպատակից՝ գրուցակիցներն ստեղծում են շփման ոճ: Զրուցակցի ուշադրությունը գրավելու համար՝ համացանցով հաղորդակցվողները ձգտում են դարձնել իրենց հաղորդագրությունն անկրկնելի, ակնառու և կոնֆլիկտային: Այս դեպքում ընտրվում է գռեհկաբանություններով համեմված անփույթ խոսք, որն առանձնանում է խոսակցական բառապաշարով և փողոցային խոսելաձևին հարիր արտահայտություններով: Հետաքրքրություն առաջացնելու համար խոսքի մեջ օգտագործվում է որոշակի առօրյա-խոսակցական կամ գրքային ոճին պատկանող արտահայտություններ և այլ եզրեր: Այդ գործոնները վիրտուալ կապերի հաստատման և պահպանման նպատակով պատճառ են հանդսանում լեզվական նորմերի խախտումների համար /Смирнов, 2005: 27/: Դա հանգեցնում է հաղորդակցական նորարարությունների. համացանցի հաղորդակցական տիրույթում լեզվական վիրտուալ ինքնության ստեղծագործականությունը շարունակաբար աճում է: Ընդ որում, այդ աճն արձանագրվում է բոլոր լեզվական մակարդակներում, որը համացանցի լեզուն դարձնում է լեզվաբանական ուսումնասիրությունների յուրահատուկ առարկա:

Համացանցով հաղորդակցության գործընթացում ձևավորվող նախադասությունները բնութագրվում են նաև շարահյուսության կանոնների անտեսմամբ: Կետադրության կանոններն ընդհանրապես անտեսվում են, իսկ կետադրական նշանները կարող են օգտագործվել ոչ իրենց ուղղակի նշանակությամբ, այլ որպես խոսքի տեմպը և այլ հատկությունները բնորոշող նշաններ: Շարահյուսության առումով, ստորակետներն ու հարցական նշաններն ընդհանրապես բաց են թողնվում: Օրինակ, բազմակետերի անընդհատ օգտագործումը վկայում է, որ հաղորդակցվողը դանդաղ է խոսում, իսկ անընդհատ ստորակետներն արտահայտում են խոսքի բարձր տեմպը: Մեծ քանակությամբ բազմակետերի օգտագործումը կարող է հաղորդակցվողի մռայլ տրամադրության ցուցանիշ լինել, իսկ շատ բացականչական նշանները, ընդհակառակը, վկայում են հաղորդակցվողի ուրախ լինելու մասին:

Եթե մեծատառերը նախադասության սկզբում կամ հատուկ անուններում հաճախ բացակայում են, սպա բացականչությունը կամ բարձր տոնայնու-

թյունն արտահայտվում են հենց դրանց օգնությամբ, երբ բառերն ամբողջությամբ մեծատառերով են գրվում:

Համացանցով հաղորդակցությանը բնորոշ է նաև հուզապատկերների՝ հաղորդակցվողների զգացմունքներն արտահայտելու համար ստեղծված որոշակի գրաֆիկական միավորների օգտագործումը: Ներկայումս շատ առցանց ռեսուրսներ հնարավորություն են տալիս տեքստային հաղորդագրություններին ավելացնել հաղորդակցվողի այս կամ այն զգացմունքն արտահայտող հուզապատկերներ: Բանավոր հաղորդակցությունը չի կարող զգացմունքային առումով չեզոք լինել, քանի որ հաղորդակցվողներն այս կամ այն կերպ արձագանքում են ստացված տեղեկատվությանը, իրենց վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն երևույթի նկատմամբ: Համացանցում հաղորդակցության ժամանակ հուզապատկերների օգտագործումը հաղորդակցվողների խոսքի բանավոր լինելու ցուցանիշ է:

Ամփոփելով՝ նշենք, որ նոր երևույթներն անխուսափելիորեն տեղիք են տալիս նոր խնդիրների և բացահայտումների: Նման խնդիրներից մեկն էլ համացանցում կիրառվող լեզվի կարգավիճակի որոշումն է: Անցյալ դարի վերջին նոր համակարգչային տեխնոլոգիաների երևան գալը հանգեցրել է այն բանին, որ համակարգիչը և համացանցը դարձել են մարդու կյանքի անքակտելի մասը և հանդես են գալիս որպես միջնորդ վիրտուալ իրականության մեջ հաղորդակցության գործընթացում: Անհերքելի է այն փաստը, որ լեզուն փոխվում է համացանցի տարածության մեջ: Համացանցում, հատկապես համացանցի բառապաշարում և հատուկ համակարգչային ժարգոնում հաճախ կարելի է հանդիպել խոսակցական լեզվական արտահայտությունների, նամակագրական ժանրի վերափոխման և հաճախ լեզվական խաղերի օգտագործման դեպքերի: Հաճախ կարելի է հանդիպել լեզվի քերականական կանոններից շեղումների:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ համացանցից օգտվողներն աստիճանաբար փոխակերպում են լեզուն իրենց հայեցողությամբ՝ բացահայտելով բառերի նոր ձևեր, որոնք վիրտուալ հաղորդակցությունից անցնում են մարդկանց իրական կյանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белинская Е. П. Язык интернет-коммуникации и социолингвистическая ситуация современности // *Вопросы социально-психологических исследований. Современная социальная психология*. М.: Наука, 2011, № 1 (10).
2. Бергельсон М. Б. Языковые аспекты виртуальной коммуникации // *Вестник московского университета. Лингвистика и межкультурная коммуникация*, 2001, № 1.
3. Горошко Е. И. К уточнению понятия «Компьютерно-опосредованной коммуникации» // *Проблемы терминоведения. Образовательные технологии и общество*. Казань, 2009, т. 12, № 2.

4. Иванов Л. Ю. Язык интернета: заметки лингвиста // *Словарь и культура русской речи.* / Под ред. Н. Ю. Шведовой, В. Г. Костомарова. М.: Индрик, М.: Азбуковник, 2000.
5. Смирнов Ф. О. Интернет-общение на английском и русском языках: опыт лингвокультурного сопоставления // Электронный ресурс: <http://www.dialog-21.ru/Archive/2005/SmirnovF/SmirnovF.pdf>
6. Чепель Ю. В. Функции языка интернета // Электронный ресурс: <http://tl-ic.kursksu.ru/pdf/2009-15.pdf>
7. Хеллидей М.А. Место «функциональной перспективы предложения» (ФПП) в системе лингвистического описания // *Новое в зарубежной лингвистике*, вып. 8, *Лингвистика текста*, М.: Прогресс, 1978.
8. Crystal D. *Language and the Internet.* Cambridge: Cambridge University Press, 2009.

Ж. МИДОЯН, А. ХАЧАТРЯН – Языковые особенности интернет-коммуникации. – В данной статье рассматриваются языковые особенности интернет-коммуникации, отмечается, что язык интернета подвергается изменениям в разных аспектах: словарном, построении текста, стратегии коммуникации и т.д., при этом наблюдаются разнообразные тенденции: орфографические отклонения от принятых норм, использование кратких лексических форм, употребление преимущественно разговорной лексики, упрощенных грамматических конструкций и языковых средств. Пользователи интернета постепенно «открывают» новые языковые формы, которые переходят из виртуальной коммуникации в реальную жизнь.

Ключевые слова: интернет-лингвистика, компьютерно-опосредованная коммуникация, виртуальный дискурс, виртуальная среда, устная и письменная коммуникация, мультимедия, интернет-жанры, гипертекст, линейный текст, синхронный/асинхронный

Zh. MIDOYAN, A. KHACHATRYAN – Linguistic Features of Internet Communication. – The language of the Internet undergoes modifications in different aspects: vocabulary, text formation, communication strategy, etc. Different tendencies such as deviation from general spelling rules, the usage of contracted word forms, the use of colloquialism in speech, simplification of grammatical structures and linguistic means are revealed. The Internet users gradually modify the language thus creating new linguistic forms which penetrate into real life from virtual communication.

Key words: Internet linguistics, Internet-mediated communication (IMC), virtual discourse, virtual environment, e-language, netspeak, written and oral communication, multimedia, internet genres, hypertext, linear text, synchronous/ asynchronous